

Հ Ե Ծ Ե Ծ Ա Ն Ք Ն Ե Ր

ՆՈՒՆԻՐ՝ ԱՊՐԻԼԵԱՆ ՍԵՐՈՒՆԻՐԻՆ

Ա.

Երբ կը տեսնեմ մանուկներ
Երգիքին տակ հայրենի,
Որ նոյն էակն անձկալի
Միասին «մա՛յր» կը կոչեն,
Նոյն սեղանին շուրջ տօնի,
Նոյն ակութիւն մօտ ջերմիկ,
Ու հացն օրհնեալ, ու գինի՛,
Ու կեա՛նք, ու կեա՛նք, հեշտութիւն,
Ու ծիծաղներ ծաղկատի...

Մանկութիւնս ի՛մ կը յիշեմ
Անմայր, անտուն, առանձին,
Դաշտերուն մէջ հարաւի,
Օրեր երկա՛ր, ցուրտ ու մութ,
Օրեր անա՛նց, չարաշո՛ւք,
Եւ անօթի՛, ծարաւի,
Ու մա՛հ, ու մա՛հ, դառնութիւն.
Ու կաթիլներ արցունքի...

– Մի՛ պատմեր, ո՛հ, մի՛ պատմեր,
Մի՛ պատմեր գա՛յն օտարին:

Բ.

Երբ համախումբ կը տեսնեմ
Պատանեակներ՝ գոարթուն,
Եղանակի՛ն մէջ գարնան,
Անհոգ, առոյգ, ոստոստուն.
Որ ընթերցման առաջին
Կոգեւորին գոհութեամբ,
Որ տանարի՛ն մէջ կ'երգեն
«Հայր մեր», «Ողջոյն» ջերմեռանդ.
Բոյրով, սիրով կ'արքեան
Ծաղիկներուն, կոյսերուն,
Ու կը սըփռեն ծիծաղներ...

Օրերս ի՛մ կը յիշեմ,
Մենաւորիկ պատանեակ,
Տըկար, վըտի՛տ ու տըրտում.
Ապրուստի հոգ, մըղձաւա՛նջ,
Սեւ աշխատա՛նք, յարկերո՛ւ
Տակ անաստուա՛ծ, պժգալի՛.
Մեքենաներ՝ ահարկու
Ականջիս տակ մըղձնչող,
Եւ ծանրութիւն կապարի
Թեւերու վրա՛յ ու սըրտիս,
Ինքնօգնութեա՛մք, զըրկանքո՛վ,
«Այր բեն գիմ»ի առաջին
Սերտողութիւն սրտայոյգ,
(Դուրսը՝ ժըպի՛տ կոյսերու,
Դուրսը՝ արեւ ու մայիս).
Ու կաթիլներ արցունքի...

– Մի՛ պատմեր, ո՛հ, մի՛ պատմեր,
Մի՛ պատմեր գա՛յն օտարին:

Գ.

Երբ կը տեսնեմ քեւ ի քեւ
Երիտասարդ էակներ,
Որ իրարու կ'ուխտեն սէր,
Անապակա՛ն, մշտատեւ,
Հողի՛ն վըրայ հայրենի.
Վըկան երկի՛նքն է՝ վերեւ,
Կու տայ Աստուած օրհնութիւն.
Այրն հողը ի՛ր կ'ակօսէ,
Կը պայքարի՛, կը տըփնի՛,
Արդար, օրհնեալ իր ուժով
Բի՛ւր կը ստանայ քե՛րք բարի:
(Նէ խոնջէնքն ի՛ր կը մեղմէ
Գորովանքո՛վ փափկասուն,
Եւ գաւակներ իրենց շուրջ
Կը դալալեն սիրասուն):

Իսկ հայրենիքն երբ գոռա՛յ
Մարտակոչն իր սրբազան,
Ջէն ի ձեռին ի ցակատ
Կը խոյանայ կատաղի,
Պաշտպան՝ հողի՛ն պապերուն,
Եւ դըրօշին տակ կ'իյնայ
Հայրենիքին, երգելով՝
«Կեանք» գոր ի՛նձ տըլիք դուն,
Ահա քեզի՛ կը դարձնեմ:
Ի՛նչ վերջաբան, ի՛նչ վախճան,
Ի՛նչ դափնիներ, ի՛նչ վըսեմ
Փառքի վընիտ ժըպիտներ...

Ահա՛ ես գի՛ս կը տեսնեմ,
Երիտասարդ կորովի,
Միտքս առոյգ ու բերրի,
Գաղափարներ՝ որ քընի՛չք
Կ'ուզեն առնել ուժգնակի,
Սակայն երկի՛նքն է օտար
Եւ խստաշո՛ւնջ՝ կըլիման.
Սիրտըս տրոփո՛ւն ու գեղուն,
Խանդաբորբո՛ք, հըրավա՛ն,
Ջգացումներ՝ բիրաւոր,
Որ կը փընտռեն՝ ապաստան,
Սակայն երկի՛նքն է օտար,
Եւ խստաշո՛ւնջ կըլիման.
Կ'անցնին կոյսեր, կու տան սէր,
Սոսկ կը ժըպա՛նք իրարու,
Ձեն հասկընար իրենք գիս,
Ու ես գիրենք չե՛մ քանչեւ,
Կ'ապրիմ պանդուխտ, միայնա՛կ,
Վերադարձի չունիմ յո՛յս:
Սակայն ե՛ս ալ որդին եմ
Ազգի մ'ազնի՛ւ, հինաւորց,
Մշակոյթի, փառքի տէր,
Այսօր, բախտին նե՛նգ խաղով,
Հալածական, ցիրուցան,
Բայց որ մեռնիլ չի՛ ուզեր,
Ձի՛ սարսափի կընիւէն,
Որ արեւներ ունի դեռ,
Որ ունի լո՛յս, ջերմութիւն,

Ազգ մը՝ որ կա՛յ «չէ՛ անցեր»,
Սակայն, բախտին նե՛նգ խաղով,
Արտասուաթոր, սրգաւոր,
Արիւնաբա՛ն, մահամերձ,
Ոտակոյտան, բըզբաւոր՝
Անիրաւում, յօշոտում,
Ես կը վախճամ՝ որ մեռնիմ
«Չօգնած անոր, անըջան»,
Ինչպէս հեծեց հէ՛ք Դուրեան.
Օտարութեան մէջ՝ պանդուխտ.
Ու կաթիլներ արցունքի...

– Մի՛ պատմեր, ո՛հ, մի՛ պատմեր,
Մի՛ պատմեր գա՛յն օտարին:

Դ.

Նահապետներ երբ տեսնեմ,
Պատկանելի, ալեփառ,
Իրեր կազնի՛, հովանի՛
Հի՛ն, դարաւոր ակութիւն.
Եւ մանուկներ քաղցրաճայն
Թառած վըրա՛ն փափկութիւն
Եւ խնդրութիւն, խնդրութիւն...

Յայնժամ Ձըմրա՛ն կը խորհիմ
Իմ օրերո՛ւ վաչկատուն,
Յետ յարատեւ պայքարին
Ահեղ կենա՛ց եւ մահու.
Ո՛չ քընչուններ դալալող,
Ո՛չ կարկաչող վըտակներ...
Աչքերուն դէմ՝ անտարբեր
Մանուկներու եւ մարդոց
Պիտի իյնամ, գերդ նոնի,
Տրտմաթալիծ, մեռաւոր.
Եւ սոսկ արեւն իմ վըրայ
Պիտի շողայ սարսափից...

– Մի՛ պատմեր, ո՛հ, մի՛ պատմեր,
Մի՛ պատմեր գա՛յն օտարին:

ՀՐԱԶ ՔԱԶԱՐԵՆՑ